Եղիշե Չարենց

Ծան կարոտներ

Պատուհանիս տակ հիմա որբ մղկտում է մի շուն.
Սիրտս լսում է նրան և սիրտս քեզ է հիշում:

Նա տխուր է ու մենակ, ոչ ոք չունի հիմա նա
Ու գանգատը դժնդակ լուսինը չի՛ իմանա:

Դուրսը ամպ է ու մշուշ, անաստղ երկինք ու գիշեր.
Մղկտում է այսքան ուշ, գանգատվում է առանց սեր:

Հեռուն թարթում է տարտամ գազե լապտերը բեկուն.
Ինչ շո՛ւտ մարեց այս անգամ արևավառ երեկոն...

Ինչ շո՛ւտ մարեց ցերեկի զվարթ աղմուկը, ու մութ
Գիշերն իջավ՝ անհոգի, անմխիթար ու անգութ:

Ցերեկը լա՛վ է այնքան, ցերեկը խինդ է բերում
Փողոցների խրախճան, անմխիթար դեգերում:

Խոհանոցի դռան մոտ, կամ խանութի մոտ հացի
Սպասումներ ու ամոթ՝ խո՛ւլ տագնապներ փողոցի:

Բայց ցերեկները չունեն մղկտուքը գիշերվա
Ու հոգու ցավը անհուն ցերեկը չի՛ երևա:

Մղկտում է հիմա նա, սիրտը զգվանք է ուզում,
Սիրտը ճչում է հիմա, մղկտում է անլեզու: -

Բայց սիրտ չունեմ էլ քո խեղճ մղկտանքը լսելու.
Քնի՛ր, քնի՛ր եղիր խե՛ղճ, անօգնական ու հլու:

Չի ուղարկի ո՛չ մի փայլ մեզ լուսինը հիմա էլ
Շո՛ւն, կարոտի՛ իմ եղբայր, դառնաթախիծ իմ ընկեր...